Երեմյան Ա., Թումասյան Դ.,
Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները

(ձեռնարկ դասավանդողների համար)

Երևան – 2011

Հեղինակներ՝

Երեմյան Ա., իրավագիտության թեկնածու ..... Մոդուլներ 2, 3

Թումասյան Դ. .....Մոդուլներ 1, 8

Ղամբարյան Ա., իրավագիտության թեկնածու ....Մոդուլներ 4, 6

Պետրոսյան Տ. .....Մոդուլներ 5, 7

Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները (ձեռնարկ դասավանդողների համար): Երևան. «Ասողիկ» Հրատ., 2011, 340 էջ:

ISBN 978-92-9235-881-5

Սույն ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների վերապատրաստման ընթացքում «Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները» դասավանդողների համար: Այդ նպատակով դասավանդողներին ներկայացվում է դասավանդման ընդհանուր մեթոդաբանությունը և ըստ կոնկրետ մոդուլների՝ տրամադրվում են դասավանդման համար անհրաժեշտ նյութեր և դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ խորհուրդներ: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ԲՈՒՀ-երում և այլ հաստատություններում ու կառույցներում մարդու թրաֆիքինգի և մարդու շահագործման դեմ պայքարի իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող անձանց համար:

Ձեռնարկը կազմելուն և հրատարակելուն աջակցել են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Երևանի գրասենյակները՝ ԵՄ ֆինանսավորմամբ: Հեղինակների խումբն իր երախտագիտությունն է հայտնում այս ձեռնարկի ստեղծմանն աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև ձեռնարկի խմբագիր, իրավագիտության թեկնածու Ա. Խորխոռունուն:

Ձեռնարկում ներկայացված տեսակետներն արտացոլում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել սույն ձեռնարկի հրատարակմանն աջակցող կազմակերպությունների տեսակետներին:

Ներածություն

Որպես թե՛ սոցիալական երևույթ, թե՛ իրավական խնդիր մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը մշտապես ուսումնասիրվում են միջազգային ու ներպետական մակարդակներով: Քննարկվում է դրանց արդի վիճակն ու զարգացումը աշխարհում: Մշտապես կատարելագործվում են թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի մեխանիզմները, որոնք ներառում են քրեաիրավական, քրեադատավարական հարցերը, օպերատիվ հետախուզական գործունեության առանձնահատկությունները, քննության արդյունավետության բարձրացման խնդիրները, ինստիտուցիոնալ համակարգերի հզորացման խնդիրները, միջազգային համագործակցությունն ու կանխարգելումը:

Հայաստանում թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական խնդիրների վերլուծությունները նպաստել են թե՛ օրենսդրության զարգացմանը և թե՛ գործնականում այդ երևույթների դեմ իրականացվող պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Սկսած 2002թ.-ից, երբ ՀՀ կառավարությունը ստեղծեց թրաֆիքինգի հարցերով խորհրդակցական մարմին, արձանագրվել են մի քանի դրական զարգացումներ. կատարելագործվել է թրաֆիքինգը քրեականացնող օրենսդրական դաշտը, իրավապահ մարմինները և մյուս դերակատարները սկսել են նույնացնել թրաֆիքինգից տուժողներին, և Հայաստանում գործող ՀԿ-ների ապաստաններից աջակցություն ստացող տուժողների թիվը զգալիորեն ավելացել է: Ընդհանուր առմամբ, թրաֆիքինգի դեմ պայքարի բոլոր մասնակիցների կարողությունները հզորացել են, թեև այդ կարողությունների ելակետային մակարդակը շատ ցածր է եղել:

2004թ.-ից ի վեր ՀՀ կառավարությունն ընդունել է թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային մի քանի ծրագիր և որոշակի քայլեր է ձեռնարկել թրաֆիքինգի մասին իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Չնայած իրականացված բազմաթիվ ծրագրերին ու միջոցառումներին, թրաֆիքինգի դեմ պայքարի տարբեր ոլորտներում դեռևս առկա են զգալի բացեր:

Գործողությունների ազգային ծրագրի իրականացման համար թե' ֆինանսական, թե' մարդկային ռեսուրսները չեն բավականացնում: Թերություններից կարելի է նշել նաև տուժողների պաշտպանության բավարար կառուցակարգերի համակարգի բացակայությունը: Կարևոր է նշել, որ մինչև 2011թ. չորս անգամ փոփոխություններ էին կատարվել թրաֆիքինգի մասին օրենսդրության մեջ:

ՀՀ կառավարության որոշումներով ընդուվող Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրերի ռազմավարությունն ուղղված է ինչպես թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրական բազայի ամրապնդմանը, այնպես էլ դրա իրականացման կառուցակարգերի ստեղծմանը:

Կարևոր քայլ էր 2008թ.-ի նոյեմբերի 20-ի N1385-Ա որոշմամբ ՀՀ կառավարության՝ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելը:

Եվ վերջապես, 2011թ.-ի մարտի 1-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-69Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 2011թ.-ի ապրիլի 9-ից: Արդյունքում էական բովանդակային փոփոխություններ են կատարվել թրաֆիքինգի/ շահագործման և մի շարք այլ հոդվածներում: Առանձին արարքներ քրեականացվել են: Ծագել է իրազեկման, ուսուցման և վերապատրաստման եղանակով թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում բարձր արդյուվետությունն արագ ապահովելու խնդիր:

Ձեռնարկի նպատակն է աջակցել ազգային կառույցների ուժերով իրականացվող վերապատրաստման այնպիսի ծրագրի կայացմանը, որը կնպաստի Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինների մասնագիտացմանը և նրանց մոտ համապատասխան հմտությունների ձևավորմանը:

Առաջնահերթ խնդիրներից է օժանդակել թրաֆիքինգի դեմ պայքարի հայաստանյան գործելակերպի բարեփոխումներին՝ դրանք առավել համահունչ դարձնելու միջազգային լավագույն փոր-

ձին՝ այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումներն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների վերապատրաստման ոլորտում «Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները» դասընթացը դասավանդողների համար: Այդ նպատակով դասավանդողներին ներկայացվում է դասավանդման ընդհանուր մեթոդաբանությունը և ըստ կոնկրետ մոդուլների՝ տրամադրվում են դասավանդման համար անհրաժեշտ նյութեր, տրվում են դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ խորհուրդներ: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ԲՈՒՀ-երում և այլ ուսումնական հաստատություններում ու կառույցներում մարդու թրաֆիքինգի և մարդու շահագործման դեմ պայքարի իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող անձանց համար:

Տվյալների աղբյուրները և տվյալների հավաքման մեթոդները համադրվել են, որպեսզի հնարավորության դեպքում հաստատվի ստացված տեղեկատվության ստույգ լինելը: Կարևոր գիտելիքների տիրապետող անձինք ընտրվել են պետական մարմիններից, միջազգային կազմակերպություններից և ՀԿ-ների ներկայացուցիչներից՝ հաշվի առնելով նրանց դերը հակաթրաֆիքինգային ազգային կառույցում՝ Խորհրդում ու աշխատանքային խմբում, և/կամ Միջազգային աշխատանքային խմբում, ինչպես նաև թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին նրանց ունեցած մասնակցությունը:

Սույն ձեռնարկի առարկան թրաֆիքինգն է, նրա քրեաիրավական բնութագիրը, միջազգային և ազգային կարգավորումը, թրաֆիքինգի հետ կապված քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեությունը, զոհի (տուժողի) պաշտպանության հարցերը, թրաֆիքինգի կանխարգելման մեխանիզմները և դասավանդման մեթոդաբանությունը:

Ինչպես օգտվել ձեռնարկից. Սույն ձեռնարկը բաղկացած է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների մասնագիտական վերապատրաստման մեթոդաբանությունից և ութ մոդուլներից: Օգտագործման հարմարավետությունն ապահովելու նպատակով դրանք հրատարակվում են

առանձին գրքերի տեսքով, սակայն կազմում են մեկ միասնական ձեռնարկի գլուխներ:

Ձեռնարկի հետ տրամադրվում է նաև էլեկտրոնային կրիչի վրա ամրագրված նյութ, որը դասավանդողների կողմից կարող է օգտագործվել «Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները» դասընթացի դասավանդման ընթացքում:

Բովանդակություն

ԲԱԺԻՆ 1. Վերապատրաստման մեթոդաբանություն
1. Մասնագիտական վերապատրաստման մեթոդաբանություն
1.1. Ներածություն
1.2. Դասավանդման մեթոդիկա
1.2.1. Ինտերակտիվություն
1.2.2. Վերաբերելիություն
1.2.3. Տարաբնույթ մեթոդների կիրառում
ա. Աշխատանքային խմբեր
բ. Կոնկրետ իրավիճակի քննարկում
գ. Քննարկում «կլոր սեղանի շուրջ»
դ. Դիդակտիկ նյութեր
1.3. Գործնական մոտեցում
1.4. Գիտելիքների գնահատում
2. Դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը
2.1. Առարկայում ընդգրկված թեմաների անվանումները, պարապմունքների տեսակները և դասաժամերի քանակը
2.2. Դասընթացի թեմաների համառոտ բովանդակություն
3. Դասընթացի մասնակիցներին տրամադրվող նյութեր
3.1. Դասընթացի հայեցակարգային դրույթները
3.2. Թրաֆիքինգին վերաբերող հիմնական միջազգային փաստաթղթեր
3.3. Թրաֆիքինգին վերաբերող ներպետական փաստաթղթեր
4. Թեսթեր և խմբային աշխատանքի նյութեր
4.1. Թեսթեր
4.2. Խմբային աշխատանքի նյութեր (խնդիրներ, գործի փաստական հանգամանքներ)
4.3.Դիդակտիկ նյութեր /PowerPoint/
5. Դասընթացի գնահատումը

ԲԱԺԻՆ 2. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները

Մոդուլ 1. Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը

Միջազգային չափորոշիչների իմպլեմենտացումը ՀՀ իրավական համակարգում

1. Ներածական մաս
2. Դասախոսին տրամադրվող նյութեր
   2.1. Թրաֆիքինգը և մարդու իրավունքները
   2.2. Թրաֆիքնգի ոլորտը կարգովորող միջազգային հիմնական փաստաթղթեր
   2.3. Թրաֆիքնգի ոլորտը կարգովորող ներպետական օրենսդրության ակնարկ
3. Նյութեր բաժանման համար
4. Հարցեր քննարկման համար
5. Խնդիրների քննարկում
6. Սլայդեր

Մոդուլ 2. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման քրեաիրավական բնութագրերը

1. Ներածական մաս
2. Դասախոսին տրամադրվող նյութեր
3. Մարդու թրաֆիքինգը, ինչպես նաև մարդուն շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը
   3.1. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու սահմանումները ՀՀ քր. օր.-ում
      3.1.1. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված «մարդու թրաֆիքինգ» հասկացությունը
      3.1.2. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի արարքները
      3.1.3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու

հանցագործությունների տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի

3.1.4. Թրաֆիքինգի կառուցակարգերը

3.1.5. Մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու մեխանիզմները

3.2. Մարդու հանցավոր շահագործում

3.2.1. Շահագործման հասկացությունը

3.2.2. Պոռնկության շահագործում կամ սեքսուալ շահագործման այլ ձևեր

3.2.3. Հարկադիր աշխատանք կամ ծառայություններ

3.2.4. Ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ

3.2.5. Մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելը

3.3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու հանցավոր շահագործման զոհը

3.3.1. Չափահաս զոհը

3.3.2. Զոհ/տուժողի՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը

3.3.3. Զոհ/տուժողին հանցագործություն կատարելու համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը

3.4. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերը

3.4.1. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտները

3.4.2. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտիվ կողմերը

3.4.3. Թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցագործությունների հանցակազմերի օբյեկտիվ կողմերը բնութագրող այլընտրանքային միջոցները

3.4.4. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների սուբյեկտիվ կողմերը

3.5. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի որակյալ հատկանիշները

4. Երեխայի թրաֆիքինգը, ինչպես նաև երեխայի շահագործումը, նրան շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը

5. Եզրահանգումներ

6. Հարցեր քննարկման համար

7. Սլայդներ

Մոդուլ 3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման սահմանազատումը հարակից այլ հանցակազմերից

1. Ներածական մաս

2. Դասախոսին տրամադրվող նյութեր

2.1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (ՀՀ քր. օր.-ի 132^3-րդ հոդված)

2.2. «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը», «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը» և «Պոռնկագրական առարկաներ կամ նյութեր տարածելը»

2.2.1. Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը (ՀՀ քր. օր.-ի 261-րդ - հոդված)

2.2.2. Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քր. օր.-ի 262-րդ հոդված)

2.3. ՀՀ քրեական օրենսգրքի «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով 20-րդ գլխում ներառված առանձին հանցագործություններ

2.3.1. Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր.-ի 166-րդ հոդված)

2.3.2. Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր.-ի 166.1-րդ հոդված)

2.3.3. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ծնողի կողմից երեխայի վաճառքը (ՀՀ քր. օր.-ի 168-րդ հոդված)

3. Հարցեր քննարկման համար

4. Սլայդներ

Մոդուլ 4. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

1. Ներածական մաս

2. Դասախոսին տրամադրվող նյութեր

2.1. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները

2.2. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով առանձին քննչական գործողությունների մարտավարությունը

2.3. Քննչական և օպերատիվ մարմինների համագործակցության կազմակերպումը թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով

3. Հարցեր քննարկման համար

4. Խնդիրների քննարկում

5. Սլայդներ

Մոդուլ 5. Թրաֆիքինգի վերաբերյալ գործերով օպերատիվ հետախուզական միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում

1. Ներածական մաս

2. Հարցեր քննարկման համար

3. Խնդիրների քննարկում

4. Սլայդներ

Մոդուլ 6. Թրաֆիքինգի զոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

1. Ներածական մաս

2. Դասախոսին տրամադրվող նյութեր

2.1. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության հատուկ միջոցները

2.1.1. Պաշտոնական նախազգուշացում

2.1.2. Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը

2.1.3. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները

2.2. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության դատավարական միջոցները

2.2.1. Տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը

2.2.2. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը

2.2.3. Նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը

2.2.4. Վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը ու հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը

2.2.5. Դատաքննության ընթացքում պաշտպանվող անձին ամբաստանյալի բացակայությամբ հարցաքննելը

2.2.6. Դռնփակ դատական քննություն անցկացնելը

2.2.7. Միջնորդավորված առերեսում

2.3. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքերը, պայմանները և կարգը

2.3.1. Պաշտպանության միջոց ձեռնարկելու հիմքերը

2.3.2. Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու պայմանները

3. Խնդիրներ և դատավարության նմանակում

4. Սլայդներ

Մոդուլ 7. Թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

1. Ներածական մաս
2. Դասախոսին տրամադրվող նյութեր
   2.1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը
3. Հարցեր քննարկման համար
4. Խնդիրների քննարկում
5. Սլայդներ

Մոդուլ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը ՀՀ-ում

1. Ներածական մաս
2. Դասախոսին տրամադրվող նյութեր
   2.1. Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը
   2.2. Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելումը
   2.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը
   2.4. ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում որոշ մարմինների (ոստիկանության, սահմանապահ զորքերի, դատարանների, դատախազության, փաստաբանների ու աշխատանքային տեսչության) գործունեությունը, դերն ու նշանակությունը
3. Տրամադրվող նյութեր
4. Հարցեր քննարկման համար
5. Սլայդներ

ԲԱԺԻՆ 1
Վերապատրաստման մեթոդաբանություն

1. Մասնագիտական վերապատրաստման մեթոդաբանություն

1.1. Ներածություն

Անոտացիա. Դասընթացում ներկայացվում են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 2000թ. Կոնվենցիայի (Այսուհետ՝ ՄԱԿ-ի Կոնվենցիա) և դրան կից Արձանագրության՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» (Այսուհետ՝ Պալերմոյի արձանագրություն) և Եվրոպայի խորհրդի 2005թ. «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Կոնվենցիայի (Այսուհետ՝ ԵԽ Կոնվենցիա) կարգավորման առարկան, կառուցվածքը, դրանց դերն ու նշանակությունը միջազգային իրավունքում թրաֆիքինգի արգելման ինստիտուտի զարգացման հարցում:

Առանձնահատուկ նշանակություն է տրվում ՀՀ գործող օրենսդրությամբ Կոնվենցիաների առանձին դրույթների իմպլեմենտացման հարցերին:

Դասընթացի նպատակը և խնդիրները

<u>Դասընթացի նպատակն է՝</u> ունկնդիրներին գիտելիք հաղորդել թրաֆիքինգի դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգում ՄԱԿ-ի և ԵԽ-ի Կոնվենցիաների ու Պալերմոյի արձանագրության յուրահատուկ դերակատարության և նշանակության մասին: Հատկապես կարևորվում են քրեական արդարադատության ոլորտում Կոնվենցիաների կանխարգելիչ ներուժի բացահայտումը, ներկայացումը և դրանով իսկ Կոնվենցիաների իրավական արժեքի բարձրացումը իրավակիրառ ոլորտում:

Դասընթացի խնդիրներն են՝

- ներկայացնել թրաֆիքինգի ընդհանուր բնութագիրը և դրա դեմ պայքարի ոլորտում առկա կառուցվածքը, այդ պայքարի ապահովման միջազգային կառուցակարգերը,
- պարզաբանել «թրաֆիքինգ» հասկացության բովանդակությունը, դրա որոշման չափանիշները, ինչպես նաև տարբերությունը հարակից հանցագործություններից,
- վերհանել ՀՀ օրենսդրությամբ Կոնվենցիաների իմպլեմենտացման խնդիրները,
- ներկայացնել թրաֆիքինգի մասին հաղորդումների պատշաճ քննության ապահովման կառուցակարգերը, պատշաճ քննություն չիրականացնելու իրավական հետևանքները,
- վերլուծել թրաֆիքինգի դեպքերում պատժողական քաղաքականության ուղղությունները՝ ձևավորված չափանիշների տեսանկյունից:

1.2. Դասավանդման մեթոդիկա

Իրավապահ մարմինների աշխատակիցների և աշխատանքային տեսուչների վերապատրաստման տարբեր ուսումնական հաստատություններում դասընթացների ժամանակ օգտագործվում են դասավանդման տարբեր արդյունավետ մեթոդներ՝ հաշվի առնելով լսարանի առանձնահատկությունները: Մասնավորապես, առաջարկվում է կիրառել դասավանդման ստեղծագործական, ինտերակտիվ մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս հետաքրքրել լսարանին և ներառել նրանց ուսումնական գործընթացում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրավունքի ոլորտում մասնագետների վերապատրաստման առավել արդյունավետ մեթոդներն են՝ խմբային աշխատանքները, սեմինար-դասախոսությունները, կոնկրետ գործերի, դեպքերի վերլուծություն-քննարկումները, «կլոր սեղանի շուրջ» բանավեճերը և դերային խաղերը:

1.2.1. Ինտերակտիվություն. Այս ծրագիրը ենթադրում է ուսուցման ինտերակտիվ մեթոդի կիրառում, ինչը նշանակում է ուսուցման գործընթացին ունկնդրի ակտիվ մասնակցության

ապահովում: Ունկնդիր պրակտիկ աշխատողները առավել լավ են յուրացնում ուսումնական նյութերը, եթե ուսումնական գործընթացում նրանց ինքնուրույնության հնարավորություն է տրվում: Արդյունավետության համար ունկնդիրները պետք է մասնակցեն ուսումնական ողջ գործընթացին: Որպես իրավապահ մարմինների ներկայացուցիչներ՝ նրանք իրենց գործնական փորձը բերում են ուսումնական գործընթաց: Գործնական ոլորտի այդ գիտելիքները պետք է ակտիվորեն օգտագործել՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

<u>1.2.2. Վերաբերելիություն.</u> Ողջ ուսումնական գործընթացում ունկնդիրը կարող է իրեն հարց տալ. ի՞նչ կապ ունի այս ամենը իր առօրյա աշխատանքի հետ: Դասավանդողի աշխատանքի հաջողության գրավականը այդ հարցի համոզիչ պատասխանն է: Ուստի պետք է գործադրել բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի ուսումնական նյութը ուղղակի կապ ունենա ունկնդրի առօրյա աշխատանքի հետ, ինչպես նաև պետք է ներկայացնել այդ նյութերի գործնական արժեքն ու նշանակությունը, եթե դա ակնհայտ չէ:

<u>1.2.3. Տարաբնույթ մեթոդների կիրառում.</u> Ունկնդիրների ակտիվությունն ապահովելու համար ողջ դասընթացի ընթացքումպետք է կիրառվեն տարբեր մեթոդներ: Ունկնդիրների մեծ մասի համար անսովոր են երկարատև լսարանային դասընթացները, և հոգնեցուցիչ ու միապաղաղ դասընթացից ձանձրացող ունկնդրի ուշադրությունը կարող է շեղվել: Առաջարկվում է դասընթացի ժամանակ կատարել հետևյալ հանձնարարականները.

<u>ա) Աշխատանքային խմբեր.</u> Դասընթացի բոլոր մասնակիցներին կարելի է բաժանել 5-6 անձից բաղկացած մի քանի խմբի, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարել կարճ ժամանակահատվածում (մինչև 40 րոպե) քննարկել որևէ թեմա, լուծել որևէ խնդիր: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր խմբի կարող է կցվել մեկ վարող:

Խմբային աշխատանքներից հետո ունկնդիրները հավաքվում են, և յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ ներկայացնում է խմբի քննարկման արդյունքները:

բ) Կոնկրետ իրավիճակի քննարկում. Աշխատանքային խմբերը, տարաբնույթ թեմաներ քննարկելուց բացի, կարող են վերլուծել կոնկրետ իրավիճակներ: Այդպիսի օրինակները պետք է հիմնված լինեն իրական դեպքերի վրա: Կոնկրետ իրավիճակների քննարկումը ունկնդրից պահանջում է օգտագործել իր գիտելքները և հմտությունները թրաֆիքինգի որակմամբ, թրաֆիքինգի զոհերի փոխհատուցման ոլորտում և այլն:

գ) Քննարկում «կլոր սեղանի շուրջ». «Կլոր սեղանի շուրջ» քննարկումներում պետք է ներգրավվեն քննարկվող հարցի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներ ունեցող փորձագետներ: Նպատակը կենդանի քննարկում կազմակերպելն է: Վարողը պետք է ղեկավարի այդ գործընթացը, ազատ տիրապետի քննարկվող նյութին: Ունկնդիրը պետք է հնարավորություն ունենա քննարկվող հարցի վերաբերյալ որոշում կայացնելու, սեփական կարծիքը հայտնելու և այն հիմնավորելու:

դ) Դիդակտիկ նյութեր. Իրավապահ մարմինների աշխատակիցների և աշխատանքային տեսուչների վերապատրաստման համար օգտակար է գործածել ցուցատախտակներ (ստենդներ), ցուցադրական նմուշներ, տեսապատկերներ (սլայդներ) և այլ դիդակտիկ նյութեր:

1.3. Գործնական մոտեցում

Գործնականում իրավապահ մարմինների աշխատակիցներն ու աշխատանքային տեսուչները ոչ միայն պետք է իմանան այս ոլորտի օրենսդրությունը, այլ նաև կարողանան այն կիրառել բարձր արդյունավետությամբ: Նախապատրաստական ծրագրերում այս երկու հանգամանքներից որևէ մեկն անտեսելու դեպքում վերապատրաստման գործընթացը, ամենայն հավանականությամբ, հաջողություն չի ունենա: Այդ նպատակով վերապատրաստման ծրագիրը պետք է ներառի գործնական նշանակության տեղեկատվություն:

1.4. Գիտելիքների գնահատում

Իրավապահ մարմինների աշխատակիցների և աշխատանքային տեսուչների համար կազմակերպվող դասընթացների ավարտին նախատեսվում է դասընթացի գնահատման գործընթաց, որն իրականացվում է հարցաշարերի և թեսթերի միջոցով: Դասընթացի ավարտին հարցաշարերի և թեսթերի լրացումը դասընթացը վարողին հնարավորություն կընձեռի ստուգելու ունկնդիրների ձեռք բերած գիտելիքները, անընդմեջ կատարելագործելու այս ձեռնարկի հիման վրա իրականացվող դասընթացի ծրագիրը:

2. Դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը

2.1. Առարկայում ընդգրկված թեմաների անվանումները, պարապմունքների տեսակները և դասաժամերի քանակը

Ստորև ներկայացված դասաժամերի բաշխումը պայմանական է: Այն ենթակա է վերանայման կախված ԲՈՒՀ-ից, դասավանդվողների անձնակազմից, դասավանդման նպատակներից, խնդիրներից և այլ հանգամանքներից:

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր ժամաքանակը	Դասախոսություն /Power Point/, ժամ.	Գործնական պարապմունք, ժամ.	Սեմինար, ժամ.
1	2	3	4	5
Ներածություն	1	1		
ԲԱԺԻՆ 1. Վերապատրաստման մեթոդաբանություն	5	2	2	1
ԲԱԺԻՆ 2. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները				
Մոդուլ 1. Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը:	2	1		1
Մոդուլ 2. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման քրեաիրավական բնութագրերը	4	2	1	1
Մոդուլ 3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման սահմանազատումը հարակից	4	2	1	1

այլ հանցակազմերից				
Մոդուլ 4. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	4	2	1	1
Մոդուլ 5. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ հետախուզական միջոցառումները և դրանց արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում	4	2	1	1
Մոդուլ 6. Թրաֆիքինգի զոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	4	2	1	1
Մոդուլ 7. Իրավապահ մարմինների դերը թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացում	4	2	1	1
Մոդուլ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը ՀՀ-ում	4	2	2	
ԸՆԴՀԱՆՈՒՐ	36	18	10	8

2.2. Դասընթացի թեմաների համառոտ բովանդակություն

<u>Մոդուլ 1.</u> Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը: Միջազգային չափորոշիչների իմպլեմենտացումը ՀՀ իրավական համակարգում:

ՄԱԿ-ի և ԵՄ-ի Կոնվենցիաների կարգավորման առարկան, կառուցվածքը, դերը և նշանակությունը, հարաբերակցությունը միջազգային այլ փաստաթղթերի հետ, ՀՀ-ի կողմից վավերացումը, ՀՀ իրավական համակարգում դրա դերը: Պալերմոյի արձանագրությունը, դրա կարգավորման առարկան, առանձնահատկությունները: ԵՄ Կոնվենցիայի և ազգային օրենսդրության համապատասխանելիությունը:

Դասախոսություն – 1 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

<u>Մոդուլ 2.</u> Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման քրեաիրավական բնութագրերը:

ՀՀ քրեական օրենսգրքում թրաֆիքինգին վերաբերող հոդվածների վերլուծությունը և առանձնահատկությունների բացահայտումը:

1. Թրաֆիքինգի վերաբերյալ՝

ա) սահմանել մարդու թրաֆիքինգ հասկացությունը,

բ) պարզել մարդու թրաֆիքինգի մեխանիզմը,

գ) պարզել մարդու թրաֆինգը բնութագրող հատկանիշները:

2. Մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու վերաբերյալ՝

ա) սահմանել մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու հասկացությունները,

բ) պարզել մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու մեխանիզմը,

գ) պարզել մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելը կամ պահելը բնութագրող հատկանիշները:

3. Երեխայի թրաֆիքինգի, ինչպես նաև երեխային շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու վերաբերյալ՝

ա) պարզել երեխայի թրաֆիքինգի մեխանիզմի առանձնահատկությունները,

բ) պարզել երեխային շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու մեխանիզմի առանձնահատկությունները:

Դասախոսություն – 2 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

<u>Մոդուլ 3.</u> Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման սահմանազատումը հարակից այլ հանցակազմերից:

Վերլուծել ՀՀ քր. օր.-ում նախատեսված հետևյալ հանցագործությունները՝

- 132[3]-րդ հոդվածով նախատեսված՝ շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը,

- 166-րդ հոդվածով նախատեսված՝ երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը,

- 166[1]-րդ հոդվածով նախատեսված՝ երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջի-

կությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը,

- 168- րդ հոդվածով նախատեսված՝ խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը,

- 261-րդ հոդվածով նախատեսված՝ շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը,

- 262-րդ հոդվածով նախատեսված՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը:

Տարանջատել վերը նշված հանցակազմերը մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցակազմերից:

Դասախոսություն – 2 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

<u>Մոդուլ 4.</u> Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում:

Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները: Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով առանձին քննչական գործողությունների մարտավարությունը: Քննչական և օպերատիվ մարմինների համագործակցության կազմակերպումը թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով:

Դասախոսություն – 2 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

<u>Մոդուլ 5.</u> Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումները և դրանց արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում:

Թրաֆիքինգի վերաբերյալ գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում: Թրաֆիքինգի վերաբերյալ գործերի շրջանակներում, իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումների ծառայողների լիազորությունները, գործողությունները օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսանկյունից:

Դասախոսություն – 2 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

<u>Մոդուլ 6.</u> Թրաֆիքինգի զոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության հատուկ միջոցները (պաշտոնական նախազգուշացում, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները):

Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության դատավարական միջոցները (տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը, նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը, վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային

ու այլ հաղորդումները գաղտնալսելը, դատաքննության ընթացքում պաշտպանվող անձին ամբաստանյալի բացակայությամբ հարցաքննելը, դռնփակ դատական քննություն անցկացնելը, միջնորդավորված առերեսում):

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքերը, պայմանները և կարգը (պաշտպանության միջոց ձեռնարկելու հիմքերը, պաշտպանության միջոցներ ձեռնարկելու պայմանները):

Դասախոսություն – 2 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

<u>Մոդուլ 7.</u> Իրավապահ մարմինների դերը թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացը: Պետական կառավարման լիազորված մարմինների և հասարակական կազմակերպությունների դերակատարությունը թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացում:գործողությունները զոհեր հայտնաբերելու տարբեր դեպքերում: Ուղղորդման նպատակները:

Դասախոսություն – 2 ժամ:

Գործնական պարապմունք – 1 ժամ:

Սեմինար – 1 ժամ:

Մոդուլ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը ՀՀ-ում:

Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը: Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային համագործակցությունը:

ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում ոստիկանության, սահմանապահ զորքերի, դատարանների, փաստաբանների և այլ մարմինների աշխատակիցների գործունեությունը, դերն ու նշանակությունը

Դասախոսություն – 2 ժամ:

Գործնական պարապմունք – 2 ժամ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.
2. Եվրոպայի խորհրդի 2005թ. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիա
3. ՄԱԿ-ի 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիա
4. Պալերմոյի 2000թ. Արձանագրությունը՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին
5. Պալերմոյի 2000թ. Արձանագրությունը՝ ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ
6. ԱՄԿ-ի 1930թ. Հարկադիր աշխատանքի մասին թիվ 29 կոնվենցիա
7. ԱՄԿ-ի 1957թ. Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին թիվ 105 կոնվենցիա
8. ՄԱԿ-ի 1926թ.Ստրկության դեմ պայքարի մասին կոնվենցիա
9. ՄԱԿ-ի 1956թ. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտ սովորույթների ու ինստիտուտների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա

10. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն և իրավական հարաբերությունների մասին 2002թ. կոնվենցիա (Քիշնևի կոնվենցիա)
11. ՀՀ Սահմանադրություն ընդունված 27.11.2005թ.
12. ՀՀ Քրեական օրենսգիրք ընդունված18.04.2003թ.
13. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք ընդունված 9.11.2004թ.
14. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք ընդունված 01.07.1998թ.
15. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք ընդունված 05.05.1998թ.
16. ՀՀ 2008թ.-ի մայիսի 26-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը
17. ՀՀ 2007թ.-ի հոկտեմբերի 22-ի «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը
18. ՀՀ 2007թ.-ի փետրվարի 22-ի «Դատախազության մասին» օրենքը
19. ՀՀ 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի «Օտարերկրացիների մասին» օրենքը
20. ՀՀ 2005թ.-ի մարտի 24-ի «Աշխատանքի պետական տեսչության մասին» օրենքը
21. ՀՀ 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի «Փաստաբանության մասին» օրենքը
22. ՀՀ 2004թ. դեկտեմբերի 14-ի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը
23. ՀՀ 2002թ.-ի ապրիլի 16-ի «Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին» օրենքը
24. ՀՀ 2002թ.-ի հոկտեմբերի 8-ի «Անհատական տվյալների մասին» օրենքը
25. ՀՀ 2001թ.-ի նոյեմբերի 20-ի «Սահմանապահ զորքերի մասին» օրենքը
26. ՀՀ 2001թ.-ի դեկտեմբերի 4-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը
27. ՀՀ 2001թ.-ի ապրիլի 16-ի «Ոստիկանության մասին» օրենքը

28. ՀՀ 996թ.-ի հոկտեմբերի 1-ի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքը
29. ՀՀ 1994թ.-ի հուլիսի 17-ի «Օտարերկրացիների մասին» օրենքը
30. ՀՀ Կառավարության 2010թ.-ի սեպտեմբերի 3-ի որոշումը «ՀՀ-ում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին»
31. ՀՀ Կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 20-ի որոշումը «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

32. Ալեքսանյան Մ. Նախնական քննություն, Երևան, 2002.
33. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1977, հատոր 1.
34. Բոշնաղյան Ա., Երեմյան Ա. Հանցավոր եկամուտների օրինակացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր /տեսական մեկնաբանություններով/, Ժողովածու. Եր.: Ասողիկ, 2005.
35. Երեմյան Ա., Թումասյան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009.
36. Երեմյան Ա., Ղամբարյան Ա., Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը. Եր., 2006.
37. Երեխաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում. Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, Երևան, ՀՕՄ, 2005

38. Իրավապաշտպանների միջազգային լիգա, http;europ.eu.int/comm./employment-social/eguopp/index.en.htm.
39. Հանա Շնայդրովա, Բլանկա Հանչիլովա Մարդկանց թրաֆիքինգը ՀՀ-ում. Երևան, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ, 2007.
40. Հայ միգրանտների ապօրինի առևտուր և աշխատանքային շահագործում. Երևան, 2005,
41. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավական մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման զեկույց, Երևան, 2007.
42. Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը. Երևան, 2007.
43. ՀՀ Քրեական իրավունք. Ընդհանուր մաս/ Գ.Ս. Ղազինյանի գլխավորությամբ. Երևան: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007.
44. ՀՀ Քրեական իրավունք. Հատուկ մաս/ Գ.Ս. Ղազինյանի գլխավորությամբ. Երևան: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007.
45. Հարությունյան Ա.Ա. Մարդկանց առևտրի, պոռնկության կամ սեռական այլ շահագործման վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան, Երևան, 2005.
46. Մարդկանց շախագործում. ինտերնետային հավաքագրում, Եվրոպայի Խորհուրդ, 2007
47. Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր. ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի զեկույցը Տնտեսական և սոցիալական խորհրդին. Լրացում. 2002.
48. Մելքոնյան Լ. Ինչպես կազմակերպել թրաֆիկինգի դեմ պայքարը համայնքներում, Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների համար, Երևան, 2006
49. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով, 13-15 փետրվար 2008թ., թիվ 007 աշխա-

տանքային հանդիպում: Պաշտպանությունից մինչև հետապնդում. ռազմավարական մոտեցում
50. Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր, ՄԱԿ, 20 մայիսի, 2002թ.
51. Андрианов С.Н., Берсон А.С., Никифоров А.С. Англо-русский юридический словарь, Москва, “Руссо”, 2000.
52. Бандурка А.М. Противодействие торговле людьми. Киев-Харьков, 2003.
53. Бессарабов В.Г., Быкова Е.В., Курочкина Л.А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. М.: “Юрлитинформ”, 2005.
54. Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. М., 1999, С. 88,
55. Буланова О., Буланова А. В помощь потерпевшему. Психологическая и правовая помощь потерпевшим и свидетелям в уголовном процессе, М., 2008.
56. Гармаев Ю.П. Незаконная деятельность адвокатов в уголовном судопроизволстве. М.: «Экзамен», 2005.
57. Де Сальвиа М. Прецеденты Европейского Суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 г. СПб: Издательство «Юридический центр Пресс», 2004.
58. Европейская сеть против торговли людьми. Доклад по вопросам торговли людьми. Болгария, Дания, Италия, Румыния, Испания, Великобритания, Спасем детей (Save the Children), Италия, 2004.
59. Епихин А. Ю. Обеспечение безопасности личности в уголовном судопроизводстве СПб.: Изд. Юридический центр Пресс. 2004,

60. Жариков Е. В. Дифференциация уголовного процесса как средство обеспечения безопасности лиц, содействующих уголовному судопроизводству: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - Барнаул. 2004.
61. Зайцев О. А. Государственная защита участников уголовного процесса. М.: Экзамен, 2001.
62. Криминология/ Подред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова. М.: Юрист, 2002
63. Лупинская П. А. Законность и обоснованность решений в уголовном судопроизводстве. - М., 1972.
64. Механизмы перенаправления жертв торговли людьми на национальном уровне, Объединяя усилия по защите прав жертв торговли людьми, Практическое руководство, ОБСЕ, БДИПЧ, 2004.
65. Мизулина Е.Б. Торговля людьми и рабство в России: международно-правовой аспект. - М.: Юристъ, 2006.
66. Михайленев А.Р. Составление процессуальных актов по уголововным делам: Теория, методика, примерные образцы документов. Киев. 1989.
67. Мозякова В.В. Руководство для следователей. М.: Экзамен, 2003.
68. Москалькова Т.В. Уважение чести и достоинства личности как принцип советского уголовного процесса: Автореф. дисс. канд. юрид. наук. - М.: 1988
69. Освещение в средствах массовой информации проблемы торговли людьми, Пособие для журналистов, ОБСЕ, БДИПЧ, Киев, 2007.
70. ООН, Управление по наркотикам и преступности, Набор методических пособий по вопросам борьбы с торговлей людьми, Нью-Йорк, 2006.
71. Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, Международный центр по развитию миграционной политики, Программа развития ООН /ПРООН/, 2006.

72. Преступления террористической направленности: уголовное преследование на досудебных стадиях. Под науч. ред. О.Н. Коршуновой. СПб.: Изд. Юридический центр Пресс, 2003
73. Прислушиваясь к жертвам. Опыт идентификации, возвращения и помощи в Юго-Восточной Европе, Международный центр развития миграционной политики, 2007.
74. Проблема незаконной миграции в России: реалии и поиск решений.- М.: Гендальф, 2004.
75. Проституция и преступность. Москва, 1991.
76. Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. М.: 2004.
77. Руководящие принципы по пересмотру законодательства против торговли людьми с особым акцентом на регион юго-восточной Европы, ОБСЕ, БДИПЧ, 2001.
78. Тюрюканова Е.В., Принудительный труд в современной России: неурегулируемая миграция и торговля людьми. Женева, 2006.
79. Уголовное право/ Под ред. Н.Г. Кадкова. М.: Городец, 2006.
80. Шурухнов Н.Г., Обеспечение неразглашения данных предварительной проверки заявлений и сообщений о преступлениях. Уголовно-процессуальное принуждение и ответственность, их место в решении задач предварительного расследования. Волгоград, 1987.
81. Якупов Р.Х. Правоприменение в уголовном процессе России.- М., 1980.
82. Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, Vienna, 2006,
83. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader, Vienna, 2006,

84. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Handbook, Vienna, 2006
85. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Curriculum-Training Guide, Vienna, 2006
86. Crime Reduction Toolkits (UK)// www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/t p0601.htm
87. Human (Child) Trafficking: a look through the internet window. Ավստիրայի հակաթրաֆիքինգային գործողություն, Բելգրադ, Սերբիա, 2006
88. Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007
89. Oxford Advanced Learner's Dictionary, 7-th addition, Oxford University 2007.
90. Parliamentary Forum, Vienna, 12 February 2008. The appropriate legal responses to combating trafficking in persons. A handbook for Parliamentarians. Draft-summary.
91. Trafficking in human beings in the Commonwealth of Independent States (CIS),
92. Trafficking for forced labor. How to monitor the recruitment of migrant workers, ILO, 2005,

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

93. Գաբրիելյան Ա. Դատարանի զարմանալի բարեհաճությունը թրաֆիքինգի հոդվածով մեղադրվողի հանդեպ// "Հայոց աշխարհ", 9 օգոստոսի 2007թ.
94. Երեմյան Ա. Արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին (հարցի միջազգային-իրավական ասպեկտը): Ազգային Ժողով, 2005, սեպտեմբեր 7.

95. Կառավարությանն առընթեր միգրացիոն գործակալության պետ Գ. Եգանյանի ելույթից, Առավոտ, 21 հունիսի 2008թ.
96. Ղամբարյան Ա. Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումը: Օրինականություն: 2006, թիվ 35
97. Ղազինյան Գ. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: Եր. համալս. հրատ., Երևան 2001,
98. Ղուկասյան Հ. Պաշտպանի որոշ իրավունքների վերլուծությունը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի: Իրավագիտության հարցեր: Գիտ. աշխ. միջբուհական ժողովածու, 2000, թիվ 1-2
99. Մաթևոսյան Շ. Թրաֆիքինգի դասական օրինակ// Հայոց աշխարհ, 2005թ.-ի օգոստոսի 26.
100. Մելքոնյան Ռ. Պատժի նշանակման գիտագործնական նշանակությունը// "Դատական իշխանություն", 2004.-№12.
101. Бегларян А. Рабы XXI века// Аргументы и факты, 2008. №24.
102. В Антверпене разоблачена преступная группа, торговавшая девушками из России, Брюссель, 9 ноября 2004, CRY.ru
103. Волошин Ю. Сегодня нелегальная торговля людьми (траффикинг) стоит на третьем месте после торговли оружием и наркотиками// http://www.zerkalo-nedeli.com.
104. Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса// "Государство и право", 2000. № 2.
105. Жариков Е.В. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному судопроизводству на стадии возбуждения уголовного дела. Пятьдесят лет кафедре уголовного процесса УрГЮА (СЮИ): Материалы

Международная научно–практическая конференция, г. Екатеринбург, 27-28 января 2005 года.
106. За каждую "секс-рабыню" преступники получают от 1,5 до 5 тыс. долларов, Киев, 4 февраля 2004, PRO.ua
107. Игнатьев М.Е. К вопросу о нейтрализации противодействия расследованию со стороны защитника. Адвокатская практика. 2001. № 1.
108. Кравченко Р.Н., Каменев И.И. Безопасность участников уголовного процесса проблема современности. http://www.buimvd.ru/fpk/biblio/w11.doc
109. Мизулина Е. Уголовно-правовой аспект противодействия торговле людьми// «Юридический мир», 2005. №6.
110. Михалковская Ю. Почему процветает рабство// «Парламентская газета», 2005, 11 октября
111. Обезврежена крупная международная преступная группировка, продававшая российских девушек за границу, Воронеж, 30 марта 2004, CRY.ru
112. Чилингарян А. Место назначения – Дубай// «Голос Армении», 17 сентября 2005.

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am